

ՄԻՐԶԱՅ ԱՌ ՄԱՍԻՍ

Ո՛վ Մասիս , Մասիս , դու ինձ էդպէս
 Սիպտակ ¹ գլուխդ սեւ քողով ծածկել ես ,
 Սգաւոր կնիան ² նման սուգ նստած
 Դիշեր ցերեկ անմխիթար լալիս ես :
Ինձ էդքան ո՛հ , գոռում ես գոչում ,
 Լալով , ողբալով աշխարհ խրոփում ,
 Դարերով աչացդ լոյսն մթնայնում
 Հարայ , մագաթ ³ միշտ էդ ո՛ւմ ես կանչում :
Փանք Աստուծոյ , Դրախտ ունիս ծոցումդ ,
 Նոյեան տապանն էդ բարձր , ծեր գլխումդ ,
 Էջմիածինն աջ , Իւջբիլիսէն ձախումդ ,
 Բարթողիմէոս , Թադէոս կրճնակումդ :
Արագած , Սեպուհ , Սիփան վեհ սարերն ,
 Պատած են քո ամեն կողմերն
 Եփրատ , Տիգրիս , Փիսոյն , Արաքս գետերն
 Ողորում են քո աննման հոգերն :
Դեռ շէն են դիւղ ու քաղաքներդ
 Սուրբ աթոռներդ , պայծառ վանքերդ
 Արթուն հայրապետք , միր վարդապետներդ
 Դեռ մայրենի դրկում զաւակ ու թոռներդ :
Իլ ի՛նչ է քո ցաւն , թագուհի Մասիս ,
 Հերկք էդքան լսս , սգաս , ու կոծիս ,
 Դէ արի իմ սիրտն մի կտորի ,
 Սեւ շորերդ փոխիր , որ դէմքդ ծիծալի :
Չմռն անցաւ , Մասիս , Մարտն հետը ,
 Մայիսն եկն կարմիր վարդն հետը ,
 Մարդ , անասուն ողջ ուրախ են ,
 Ինձ քո դէմքն միայն տխուր են :
Իմ քաջ Մասիս , զարդ Հայաստանի ,
 Արի բեզ մատաղ , էլ դարա ⁴ մի անի ,
 Աստուած դթած է , ողորմութիւն կ'անի ,
 Այս յուսով կ'ապրի ՄԻՐԶԱՅ պատանի :

1. Սիպտակ — սպիտակ , 2. կնիակ — կնիւք , 3. Հարայ , մագաթ — յոգնութիւն
 հագեք , 4. Դարդ , հայ , ցաւ :